ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ / ՆՎԻՐԵԼՈՒ / ՄԱՍԻՆ

Դդմաշեն համայնքի 1 փողոց, 4 նրբանցք, 3 շենքի բնակարան 3 հասցում է գտնվում համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը /նախկին ուսուցչի տան շենքի բնակարաններից մեկը/, որտեղ 1997թ. բնակվում է Մեյրուջան Գալստյանը՝ կնոջ հետ: Ներկայումս այդ բնակարանում ապրում են Մեյրուջան Գալստյանը, նրա կինը՝ Հասմիկ Միրզոյանը, ինչպես նաև նրանց դուստրը՝ իր մանկահասակ որդու հետ: Մեյրուջան Գալստյանը և իր կինը երկար տարիներ աշխատել են Դդմաշենի կոլտնտեսությունում, եղել են բարեխիղճ աշխատողներ: Նրանք երկուսով էլ ունեն առողջական խնդիրներ և բնակվում են սոցիալապես վատ պայմաններում: Բնակարանը գտնվում է շենքի 1-ին հարկում: Համայնքի ղեկավարին հացեագրված դիմումով Մ. Գալստյանը խնդրում է որպեսզի բնակարանը անհատույց հանձնվի իրենց: Վերոգրյալից ելնելով՝ Դդմաշեն համանքի ավագանին գտնում է, որ նշված բնակարանը պետք է նվիրել Մեյրուջան Գալստյանին և Հասմիկ Միրզոյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի 1 փողոց, 4 նրբանցք, 3 շենք, բնակարան 3 հասցում գտնվող, համայնքային սեփականություն համարվող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N10012020-05-0002 վկայական/ 96.48 քմ մակերեսով /75.37 քմ ներքին մակերեսով/ մակերեսով բնակարանը նվիրել նույն բնակարանի բնակիչներ Մեյրուջան Գալստյանին և Հասմիկ Միրզոյանին /այսուհետ՝ նվիրառուներ/ որպես սեփականություն:

2. Առաջարկել Դդմաշեն համայնքի ղեկավարին - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նվիրառուների հետ կնքել բնակարանի նվիրատվության մասին պայմանագիր:

3. Ընդունել ի գիտություն, որ նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բնակարանի անհատույց սեփականության /նվիրատվության/ իրավունքով տրամադրման պայմանագրի կնքումից և պետական գրանցում ստանալուց հետո:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մանուկյան Ռադիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան